

Նրա ղեկավարությամբ գիտական աստիճան են ստացել 30-ից ավել երիտասարդներ: Հետազոտությունների ոլորտներն են՝ լիցքավորված մասնիկների ճառագայթների առաջադեմ ախտորոշում, լիցքավորված մասնիկների ճառագայթում, մասնիկների արագացման և մանիպուլյացիայի նոր մեթոդները, փոքր չափի լիցքավորված և չեզոք մասնիկների պիրոէլեկտրական գեներատորներ, նոր THz դետեկտորներ և դրանց կիրառությունները, ինտենսիվ ու կոմպակտ THz ճառագայթման աղբյուրներ և այլն: Բազմաթիվ գիտաժողովների կազմակերպիչ է: Հեղինակ է 80-ից ավել գիտական հոդվածների, 5 մենագրությունների, 100-ից ավել գիտաժողովների նյութերի: